

տեսութեամբ տաճարին Սրբոյ Մեծին Յօհաննու¹. տեսաք ոչ սակաւ զմարդասիրութիւնս աղնիւս եւ յայլոցն եկեղեցեաց ի գնացոս մեր ամենայն. յաւել եւ զհրաւերն լիովին՝ եթէ կացէք աստ, որոց զվարձս ամենից տացէ Տէր առատ:

Եւ ելեալ անտի՝ յանձնելով զմեզ Տեառն Աստուծոյ եւ Կարապետի նորին Սրբոյ՝ դարձաք առ ընդ կրօնին. զի ոչ դադարէին սիրտք մեր փղձկալիցք. եւ եկեալ հասաք ի Յորձանէ՝ աստուածախնամն գիւղիկ²: Արդ՝ եղիցին օրհնեալք քահանայք եւ ժողովուրդք՝ սիրելի տեղւոյն եւ ազնիւ երկրին այնորիկ. ընդ որս եւ լուսաւորեցէ Տէր

որ Կոլոս եւ Շղթայակիր անմիջապէս բռնադատուեցան պանդխտութեան դիմել:

1705ի հաւանաբար Զատիկը տօնելէն ետքը թողուցին Ամրտողը, քանի որ Վարդան Մեծ պահոց Երգ Եօթնեկին շարաթ օրը վախճանած էր, եւ Զատիկը մօտիկցած: Իրենց ուղեգիծը զիկզակ մ'է, կամ իր ուրիշ առթիւ գործածած բառով «թէկնեթէկ»: Բաղէշէն նախ կուգան Տարօն. Մշոյ դաշտ. դաշտին Արեւելեան մասէն, Զոփուէն, Մառաշիէր (— Ապահունիք) կ'անցնին դէպ ի հիւսիս: Արեւելք կ'ուղղեն իրենց քայլերը դէպ ի Աշակերտ (— Վաղարշակերտ?) Կաղզուանի կողմերը, (— Գարեղեանք, — Շիրակ) Վիշապաձոր. ըստ Ասողկայ, Գաղաձաձա՛կ կամ Թաթլոյ Վաձ (Գիրք Բ. ԳԼ. Բ. էջ 80): Թարգմանիչներու ժամանակ փայլած են Թաթուլ եւ Վարոս, սրբակրօն կեանքով: — Հոռոմոսի Վանքն ալ այն տեղ Շիրակ գաւառի մէջ է (Տեա. Կիրակոս էջ 48):

1 Ս. Յովհաննէս Մկրտչի անունով շինուած տաճարներ շատ են: Եթէ Կաղզուանի կողմերն է, Պելէիլէն է, իսկ եթէ Բագրեւանդի Պայազիտի՝ Ս. Յովհաննէսն (— Իւշթիլիսէ)է, հնագոյն եւ նշանաւորագոյն Տաճարը, Նպատ լեռան եւ Զիրաւ դաշտին քով, ուր քաշուեցաւ Մեծն Սահակ իր վերջին տարիներուն եւ վախճանեցաւ (438 Սեպտմ. 7) եւ անկից Տարօն, Աշտիշատ փոխադրեցին մարմինը:

2 Երբձանէ անունով դեղ չեմ տեսած Ս. Կարապետի մօտերը: Կոլոսի տեղագրութիւնը աւելի կը յարմարի Զիարէթի գիւղին կամ Սորտարին: